

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՌ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՈՒՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅԳՈՒԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆՎԱԾՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԴԻՈՒՔ ԵՎ ԴՐԱՁԻՏ

Համաշխարհային  
սիրային  
քնարերգու լռելիք

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՄԻՐԱՅԻՆ  
ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

**Շապիկի ձեռագրումը՝  
ԱՐԱՄ ՌՌՌՌՏԵԱՆԻ**

**Շապիկի 4-րդ էջի գծանկարը  
ԷՄԻԼԻՈ ԳՐԵԿՈՅԻ**

## Օրհներգ սիրոյ

Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս, որ զօղանջեն Եւ եթէ ունիցիմ զմարդարէութիւն եւ զհտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն զհտութիւն եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ Աէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւածէ, ոչ հպարտանայ. ոչ յանդգնի, ոչ խնդրէ դիւրն, ոչ զրգոի, ոչ խորհի զչար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ Աէր ոչ երբէք անկանի եթէ մարդարէութիւնք են՝ խափանեցին, եթէ լեզուք՝ լոնեցեն, եթէ զհտութիւն՝ խափանեցի. քանզի փոքր ի շատէ զիտեմք, եւ փոքր ի շատէ մարդարէանամք. այլ յորժամ եկեսցէ կատարումնն, փոքր ի շատէ խափանեցի

Մինչ տղայն էի, իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ի բաց խափանեցի Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ՝ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ զհտայից, որպէս եւ Նայն ծանեաւ զիս. Բայց արդ մնան հաւասար, յոյս, սէր, սոքա երեքեան եւ մեծ, քան զսոսա, սէր է

## ԴԵՅՎԻԴ ՀԵՐԲԵՐԹ ԼՈՐԵՆՍ (1885–1930)

### Սիրուող մարդու երգը

Նրա ստիներների միջեւ է իմ կացարանը, նրա ստիներների  
միջեւ

Երեք կողմից ինձ վրայ գրոհում են տարածութիւն եւ  
սարսափ, սակայն չորրորդը

Կանգնած է հաստատուն, ինչպէս մի բերդ անխորտակ՝  
ստիներապատերի միջեւ

Այսքան երկար ճանաչելով աշխարհը, չեմ խոստովանել ես  
երբեւէ,

Թէ նա ինչպէս է ինձ ճնշում, ինչքան սեղմուած ու կարծր  
են

Ապառաժները թում, հողն ու օդը խռովուած եւ ջրերը  
դեռես ետ՝ դէպ արեւմուտք են հոսում

Շարժման մէջ է ամէն ինչ՝ իրենց ուրոյն ու փոքրիկ  
ուղիներով են գնում,

Բոլորն իրար հրում են, առնչում են, գրուցում, փոքրիկ  
կապեր հաստատում,

Սակայն կրկին ցատկում հեռու իրարից՝ ցատկ, ցատկ,  
ինչպէս գնդակ՝ ցատկոտում

Իմ մարմինը յոգնել է այդ ոստիւններից՝ մարդկանց մօտ եւ  
մարդկանցից հեռու.

Իմ ունկերը խոնջացել են խօսքերից, որ թոչում են ներս  
 եւ յետոյ

Դուրս թոչում նորից, իմաստը՝ ոչինչ Նկրտումներ,  
 նկրտումներ, քարեր, կանայք եւ այրեր  
 Նրա ստինքների միջեւ է իմ կացարանը, նրա ստինքների  
 միջեւ

Երեք կողմից գրոհում են խառնակութիւն եւ ուստիւն  
 սակայն չորրորդն

Ապահով է, խաղաղութեան հանգրուան՝ ստինքաթաքերի  
 միջեւ

Ես այն եմ, ինչ եմ, ոչ ատելի դրանից, բայց ինչպիսին  
 Որ ես կամ, չեմ խուսափի ինձանից Ի վերջոյ ես ըմբռնեցի  
 Ամէն ինչ, որ ես չունեմ քնքշութիւն, անուշ քնքշութիւն,  
 քանի որ նա է այդպիսին

Եւ թոհուրոհը, որ վեր է թոչում եւ ճայթում է ինչպէս արկ,  
 բոլոր դէպքերում

Խաղաղութեան մի դուռ ունի ինձ համար, արշալոյս է  
 ջերմութեան

Արեւելքում, որտեղ նրա գիրկը մեղմասում է իմ յանդէպ, եւ  
 էլ չկայ իրարանցում

Ես յուսով եմ, որ այսպէս յաւերժօրէն կմնամ՝

Իմ դէմքը խոր թաղած նրա ստինքների միջեւ,

Եւ իմ խաղաղ սիրտը լի՝ ապահովութեամբ,

Եւ իմ խաղաղ ձեռքերը լի՝ նրա ստինքներով

(Անգլ թարգմ Վահան Մկրտչեանը)



## ԱԹ՜ՀԱՐՎԱՎԵԴԱ

(հի՛ն հնդկական պոեզիայից, 7–6–րդ  
դդ. Ք ա.)

Կախարդում՝ քաղցր խոտով

1

Այս խոտը մեղրից է ծնուած՝  
Մեղրով ենք դուրս հանում քեզ  
Մեղրից ես դու ծնուել,  
Ինձ մեղրից դարձրու

2

Մեղր է լեզուիս ծայրին,  
Լեզուիս արմատին՝ մեղրի շիթ  
Թող ամբողջովին իմ ուժի տակ լինես  
Թող դու հակուես դեպի իմ նպատակը

3

Մեղրից է յարձակումն իմ  
Մեղրից է հեռացումն իմ  
Խօսում եմ մեկյեւ ձայնով  
Թող մեղրի նմանուեմ ես

4.

Ես քաղցր եմ, քան մեղրը:

Քաղցր եմ, քան մեղրի խոտը:

Դու ցանկացիր ինձ՝

Իբրեւ մեղրե մի ճիւղ

5

Շաքարեղէգով պատուում եմ շուրջդ,

Քր դու համաձայնուես,

Որպէսզի սիրես ինձ,

Որպէսզի ինձնից չփախչես

(Թարգմ. Հենրիկ Էդոյեանը)

## ԿՈՍՏԱՍ ԷԼԼԻՆԱՍ

(1906)

### Ճամփորդութենէն յետոյ

Սիրոյ պատմութիւնը սաւազի մը, որ գիտեմուլ դարձաւ շատ խմելէն ևն այս պատմութիւնը ինձի պատմեց իրիկուն մը, ծովափնեայ գարշահոտ գիտետան մեջ՝

Ճամփորդութենէն երբ վերադարձայ՝ միասին շա՛տ քիչ զուտրճացանք մենք.

- ման եկանք ոտքով

Ու սլտտեցանք մերթ ալ սոնքալով,

Թաքսիո՛վ, կառքով  
 Մինչեւ որ, օր մալ, վերադարձիս տուն,  
 Իմացայ, որ դուն  
 Այ մեռած էիր  
 Բանի որ մեռար՝ թաղեցի՛ թեզի  
 Դուն ինձի այնքան, այնքան սուղ նստար,  
 Որ այդ դրամով ճիշտ երեք ամիս  
 Պիտի կրնայի ես զուարճանայ  
 Երկու օր անցաւ — եւ ես յիշեցի  
 Յանկարծ, որ թեզի համբուրած չէի  
 Եկայ գիշերանց եւ թեզի հողէն, -  
 - Պահակը վռնտա՛ծ էր զիս ցերեկին, -  
 Ես դո՛րս հանեցի Բիչ մէիր կանաչ,  
 Մէկ ոտքդ արդէն հալի՛ր էր սկսած, -  
 - Այ ձիւնին նման ըսպիտակ չէր ան, -  
 Եւ կանա՛չ, վարնո՛ց  
 Ապակիին պէս էր մորթո՞ւ ամբողջ  
 Եւ կակու՛ղ, խոնա՛ւ, դայարին նման  
 Եւ երբ համբուրել սկսայ թեզի, -  
 - Վերջին բարիքը, զոր թեզի ըրի, -  
 Մոռցայ պահ մը զիս - եւ յանկարծ խածի շրթունքդ վարի  
 - Ով դառնութիւն - ի՛նչ հալուէ.  
 Գիշեր երբ ըլլար՝ կը հանէի թեզ  
 Եւ առտուն՝ դարձեալ կը թաղէի ես

Եւ կհամբուրէի՛, կը սիրէի՛ թեզ  
 Բայց վեցերորդ օրն, — թաղմանդ ութերորդն, —  
 - Ո՛վ աշխարհ, գթա՛ -  
 Քեզ միայն, միայն մէ՛կ համբոյր տուի  
 Այլ չէի՛ կրնար, ալ չէի՛ կրնար  
 Շահտ կը հոտէիր

*(Յուն թարգմ. Վազգէն Ա. Եսայեանը)*

## ՔԵՆ ԶՈՆՍԸՆ

(1572–1637)

### ՍԵԼԻԱՅԻՆ

Խմիր կենացս աչքերով միայն,  
 Ու ես կխմեմ աչքերով իմ լուռ,  
 Կամ գաւի ծայրին թող համբոյրը այն,  
 Որ ամէն գինուց քաղցր է ու մաքուր  
 Ու որքան էլ ես տենչամ յագեցում,  
 Թող որ ծարաւը հոգիս խողխողի,  
 Քանզի նեկտարի գան անգամ լեցուն  
 Քո համբոյրի հետ երբէք չեմ փոխի:  
 Քեզ ուղարկեցի վարդերի մի փունջ,  
 Նուիրեցի թեզ յոյսով անյատակ,

Որ կտաս նրանց ջերմութիւն ու շունչ,  
 Որ չեն թառամի թո ինամքի տակ.  
 Իսկ դու շնչեցիր բոյրը վարդերի,  
 Ետ ուղարկեցիր փունջն իմ նուիրած,  
 Նրանք չունեի՛ն բոյրը վաղեմի.  
 Միայն բուրմունքդ վարդերից մնաց:

*(Անգլի թարգմ. Սամուէլ Մկրտչեանը)*

## ՎԻԼԵԱՍ ՇԵՔՍՊԻՐ

(1564–1616)

### Սոնետ 65

Երբ չկայ ոչ հող, ոչ արոյր, ոչ քար, ոչ ծով անեզերք,  
 Այլ միայն մահու թախիծն է նրանց իշխում տիրաբար,  
 Գեղեցկութիւնը ինչպէս պաշտպանուի մոլուցքից այդ նենգ,  
 Երբ ուժը նրա անգօր է ինչպէս ծաղիկ դալկահար  
 Կարո՞ղ է, արդեօք, ամռան մեղրահամ շունչը դիմանալ  
 Այս գանակոծող օրերի անգուսպ յարձակումներին,  
 Երբ անկարող է ժայռը նրանց դէմ անյողդողդ մնալ,  
 Եւ պողպատածոյլ դարպասն է նրանց անսացող գերին  
 Դառը մտորմունք, երբ ժամանակի գոհարը ընտիր  
 Վեռու է պահուած նրա սնդուկում մարդկանց աչքերից

Ինչ զօրատր ձեռք կարող է ճանկել նրա ուտքը ժիր  
 Կամ ով կարգելի նրան եղծանել պերճութիւնն անբիծ,  
 Ոչ ոք եւ ոչինչ, - բայց կզօրանա այդ հրաշքը վառ,  
 Երբ իմ սիրելին սեւ թանաքի մէջ շողշողա պայծառ:

### Սոնետ 66

Յոգնած սրանցից՝ ես անդորրաբեր մահուանն եմ կանչում,  
 Երբ որ տեսնում եմ արժանատրին մութացիկ ծնուած,  
 Եւ ոչինչը սին՝ ինչպէս է խինդի մէջ բարգաւաճում,  
 Եւ հաւատն անբիծ՝ տարաբախտօրէն խաբուած ու մերժուած,  
 Եւ պատիւը թանկ՝ ուրիշին տրուած անամօթաբար,  
 Եւ կոյսի պատին՝ անառակացած ու անկարեկից,  
 Եւ բնօրինակ կատարելութիւնն՝ եղծուած անարդար,  
 Եւ զօրութիւնը՝ հաշմուած կաղուտն իշխանութիւնից,  
 Եւ արուեստն անեղծ՝ իշխանապետի ձեռքով կարկամած,  
 Եւ անխելութիւնն, իբրեւ խրատտու, խելքին փորձելիս,  
 Եւ պարզութիւնը՝ պարզամտութիւն սխալմամբ կոչուած,  
 Եւ չարն յաղթական՝ հպատակ բարուն շահագործելիս.  
 Յոգնած ու զգուած՝ ինչպէս կուզէի թողնել ես սրանք,  
 Եթէ իմ մահով սերս չննար աշխարհում մեճակ:

*(Անգլ թարգմ Մամուէլ Մկրտչեանը)*

## ՄԱՅԱԹ-ՆՈՎԱ

(1722–1795)

### Պատկիրքըդ դալամով քաշած

Պատկիրքըդ դալամով քաշած, թահիրդ ոանգե-ռանգ իս  
անում.

Էրեսիդ իսալըն ծածկում է՝ մագիրդ թափանգ իս անում  
Բացվիլ իս կարմիր վարթի պես, բըլբուլի հիդ հանգ իս  
անում.

Ակոեքըդ օսկումն շարած, պոռշըդ մահանգ իս անում  
Էրեսըդ նուր լուսնի նըման՝ քանի կեհա կու բոլըրվի  
Դասաամազըդ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի.  
Էնդու համար քու տեսնողըն իր ճամփեմեն կու մոլըրվի  
Յիփ մըտնում իս մեջլիսումը, շանգ շուխի-շափանգ իս  
անում

Էրեսըդ տեսնելու գու քան քաղաք քաղկով, գիդ՝ գիդի պես  
Մեռնողը քիզմեն կու առնե անմահական դիդ՝ դիդի պես  
Յիփ աիդեմեդ ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիդ՝ ջիդի  
պես

Ինչ կոնիմ սանթուր քամանչեն, զուգսըդ չոնգուր չանգ իս  
անում:

Ծուգիդ մեջըն վարթ, մանիշակ, սընբուլ ու շուշան իս շիևի  
Քու անըրըն քաղն ինչ կոնե, քու հուաըն ռեհան իս շիևի

Աշխարքն ծով, դուն մեչըն նավ՝ ման իս գալի, լանգ իս  
անում

Տասնեմեդ մեկը չին ասի, թեգուզ աշխարղս քիզ գովին  
Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ բաց արած հովին  
Բաս քու էշխին վու՛նց դիմանամ, ջուրը տանե  
Սայաթ-Նովին.

Թե տեսնողդ մեկ էլ տեսավ՝ դիվանա-դաբանզ իս անում:

## ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

(1661–1722)

Տաղ սիրոյ ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ  
բան

Լուսնի նման պայծառ երես բոլորած,  
Ես մնացի կարօտ՝ համբուրից համար.  
Վարսերդ ոսկի թելի նման ոլորած.  
Ես մնացի կարօտ՝ ետ տալոյ համար  
Ունքերդ կապել է կամար կրակով,  
Աչքերդ վառել է պայծառ ճրագով,  
Ափսոս, որ ծածկել ես բարակ լաչակով  
Ես մնացի կարօտ՝ տեսնելոյ համար:  
Ծոցիդ շամամներըն խիստ է նորահաս,  
Վախեմ՝ թէ թառամի, շատ մի կենար պաս,



Թէ ինձ նշանց չտաս՝ ընկնեն պատուհաս  
 Ես մնացի կարօտ՝ ձեռք տալոյ համար  
 Բերանդ՝ կարմիր գինի, լեզուդ՝ համեղ նուշ,  
 Դու մինակ կու խըմես ու կանես անուշ,  
 Նաղաշըն թողել ես ծարաւ ու բեռւշ  
 Ես մնացի կարօտ՝ խմելոյ համար

## ՌԱՅՆԵՐ ՄԱՐԻԱ ՌԻԼԿԷ

(1875–1926)

### Սոցեալներ Օրփէոսից

#### II

Գրեթէ աղջիկ - յորդում միաձայն  
 երանութիւնից քնար ու երգի,  
 փայլում էր գարնան շղարշի խորքից՝  
 իմ ականջի մեջ քնելով անձայն.  
 Քնում էր իմ մեջ Քունն էր ամեն ինչ -  
 ծառն սքանչելի, խոտը զգայուն,  
 եւ քունն էին նրա մարգերն ու հեռուն  
 եւ ինձ համակող հիացումը ջինջ.  
 Նա քնեց աշխարհն: Օ, երգող Աստուած,  
 ինչպէ՛ն կերտեցիր, որ նա իր նիրհից

չի ուզում զարթնել: Մահն ո՛ր է նրա:

Օ, դու կգտնեն, մինչ քո հնօրեայ

երգը սպառուի, մոտին այդ նորից. -

Գրեթէ աղջիկ .. Ո՛ր է թաքնուած.

*(Գերմ թարգմ Յակոբ Մովսես)*

## ՊՕԼ ԷԼՈՒԱՐ

(1895—1952)

### Սիրում եմ քեզ

Սիրում եմ քեզ բոլոր-բոլոր կանանց համար որ չտեսայ

Սիրում եմ քեզ ամեն-ամեն պահի համար որ չսպրեցի

Նամայնասփուռ ամեն բոյրի ու տաք հացի բոյրի համար

Այն ձեան համար որ հալում է ու առաջին ծաղկանց

. համար

Այն կենդանու համար անմեղ որը մարդուց չի վախենում

Սիրում եմ քեզ սիրոյ համար

Սիրում եմ քեզ բոլոր-բոլոր կանանց համար որ չեմ սիրում

Այն ով է ինձ անդրադարձնում եթէ ոչ դու այնքան վատ

եմ ես ինձ տեսնում

Ես առանց քեզ տեսնում եմ լոկ ունայն տարածք

Անցեալի մէջ ես այսօրուայ

Դեղնած խոտի վրայով եմ անցել բոլոր այդ մահերով

Ուժ չունեցայ տեսնել պատը իմ հայելու  
 Բառ առ բառ էր անհրաժեշտ այս կեանքը սերտել  
 Այնպես ինչպես մոռանում են  
 Սիրում են քեզ խելթիդ համար որ իմը չէ  
 Ամբութեանդ համար նաեւ  
 Սիրում են քեզ ընդդէմ ամէն-ամէն բանի  
 Յաւերժական սրտի համար որ չեմ բանտում  
 Դու կարծում ես թէ կասկած ես բանականը դու ես որ կաս  
 Մեծ արեւն ես որ ելնում է գլխիս վերեւ  
 Երբ ինձ վրայ վստահ են ես

*(Յրանս թարգմ Նուարդ Վարդանեանը)*

## ԺԻՒԼ ԼԱՖՈՐԳ

(1860–1887)

### Գեղագիտութեան դաս

Աղջիկներին ջահել կամ էլ կանանց հասուն  
 Ես հպուել եմ մի քիչ, ճանաչում եմ, գիտեմ  
 Կան, որ շուտ չեն տրում, կան, որ «չէ» չեն ասում.  
 Իմ կարծիքն այդ մասին ես դնում եմ՝ ձեր դէմ  
 Դրանք տարբեր գնի ծաղիկներ են միայն,  
 Նայած օրուայ ժամին՝ կամ պարզ են, կամ գոռոզ.

Չեն ընդունում բնաւ ուժ կամ նման մի բան  
 Քեզ համար վայելք է, նրանց համար՝ ապրուստ  
 Ոչնչից չեն յուզում, չեն զայրանում երբէք,  
 Ուզում են, որ իրենց գեղեցկուհի կոչես  
 Միշտ չարացնում են քեզ եւ լաւ գիտեն, որ մենք  
 Նրանց գործածում ենք այնպէս, ինչպէս.  
 Առանց երդումների եւ մատանու հոգսի  
 Խմենք այն քիչը, որ նրանք տալիս են մեզ  
 Թող մեր մասին, ի՛նչ փոյթ, ով ինչ ուզի՝ խօսի,  
 Նրանց համար մէկ է՝ վարկ ունես, թէ չունես  
 Քաղենք առանց յոյսի, առանց խղճի խայթի,  
 Թող մարմինը թօշնի այդ վարդերից յետոյ  
 Երգենք բազում երգեր, եղանակներ անթիւ,  
 Որովհետեւ չկայ ոչ մի բան էլ յետոյ

*(Ճրանս թարգմ. Գուրգէն Գասպարեանը)*

## ԹՈՄԱՍ ՍԹԸՐՆՍ ԷԼԻՈԹ

(1888–1965)

### Հիստերիա

Երբ նա ծիծաղեց, եւ զգացի, որ միախառնում եմ նրա  
 ծիծաղին, դառնում նրա մի մասը, մինչեւ որ նրա ատամներն  
 ընդամենը դարձան խստավարժութեան ընդունակ պատահական

ասաղեր: Ինձ՝ ներքաշում էին կարճատեւ հեւքերը, շնչարգելութեան վայրկենական վերադարձները կլանում էին ինձ. վերջապէս ես կորայ նրա կոկորդի մթին անձաւներում, եւ աներեւոյթ մկանների ծփանքը քերծուտում էր ինձ: Դողացող ձեռքերով տարեց մատուցողը մետաղեայ ժանգոտ սեղանին վարդագոյն ու սպիտակ վանդակներով սփռոցն էր հապշտապ գցում ասելով. «Եթէ տիկինն ու պարոնը կամենում են թեյել պարտեզում, եթէ տիկինն ու պարոնը կամենում են թեյել պարտեզում...»: Որոշեցի, որ եթէ դադարի նրա կրծքերի ցնցումը, ապա հնարատր կլինի հաւաքել միջօրէի պատառիկները, եւ ուշիմ նրբութեամբ ուշադրութիւնս բեւեռեցի այդ նպատակին:

*(Անգլ թարգմ Սամուէլ Մկրտչեանը)*

## ՍԵՄԻՒԷԼ ԹԵՅԼԸՐ ԲՈԼՐԻՉ

(1772–1834)

Էքսպրոմտ՝ մի տիկնոջ գեղեցկութիւնը  
փառաբանող երգի առթիւ

Չեմ գնահատում շուշան ճակատը,  
Արեւն աչքերի, այտերի վարդը.  
Չէ որ ծաղիկներ կան հազար ու մի՝  
Հազարապատիկ թանկ է ինձ համար  
Բնքուշ հայեացքը, որ սոսկ Սէրն ունի,

Ու տեսնում է սուկ Սիրոյ աչքն անմար:

*(Անգլ թարգմ Սամուել Մկրտչեանը)*

## ՌՌԲԵՐԹ ԲԸՐՆՍ

(1759–1796)

### Կարմիր, կարմիր վարդ

Սերս կարմիր, կարմիր վարդ է  
 Ամռան արեւի տակ,  
 Սերս քնքո՛ւշ մեղեդի է,  
 Քնքուշ ու ներդաշնակ  
 Որքան սիրուն ես, իմ անգին,  
 Այնքան իմ սերն է խոր,  
 Ու կսիրեմ, մինչեւ հատնեն  
 Ծովերը բոլոր՝  
 Մինչեւ ծովերն հատնեն, իմ սեր,  
 Հալչեն ժայռերը վեւ,  
 Մինչեւ կեանքն էլ հատնի, իմ սեր,  
 Ես միշտ կսիրեմ քեզ:  
 Մնաս բարով, դու իմ միակ,  
 Եւ սպասիր ինձ,  
 Մինչեւ որ գամ նորից, իմ սեր,

Հեռուից ու շահտ հեռուից

(Անգլ թարգմ Սամուել Մկրտչեանը)

## ԱՆԱԿՐԷՈՆ

7

Վարդը՝ սիրոյ նշանակ,  
 Պիտ ես խառնե՛մ Բաքոսին,  
 Ծածկեմ վարդով գեղաթերթ  
 Քունքերը իմ եւ խմե՛մ  
 Գինին՝ զուարթ խնդալով:  
 Վա՛րդ, ո՛վ ծաղիկ վեհագոյն,  
 Վա՛րդ, անգի՛ն զանձ դու զարնան,  
 Վա՛րդ, ցնծութի՛ն աստուածների,  
 Քեզնով է, վա՛րդ, պսակում  
 Պերձ հերքն իր զարմն Աֆրոդիսի,  
 Քարիսների հետ պա՛ր գալիս:  
 Ի՛նձ էլ զուգիր, եւ քնարով,  
 Տաճարիդ մօտ, ո՛վ Դիոնիս,  
 Պիտ լիաստինք կոյսի հետ  
 Պսակներով վարդահիւս  
 Ես պճնուե՛մ, կաքաւե՛մ

9

Տուէք, տուէք ինձ, ո՛վ կանայք,  
Անյագ խմել Բաքոսին,  
Քանզի արդէն տապի մէջ  
Սգո՛ւմ եմ ես տոչորուած  
Տուէք ծաղկանց ինձ պսակներ,  
Տուէք գլուխս ստուերեմ  
Բայց այրում է ճակատը իմ  
Այլ ինչն է, որ պիտ պաշտպանի  
Սիրտս Սիրոյ կրակից

10

Եկ մենք նստենք հովանու տակ  
Տերեալիք, չքնաղ ծառի  
Սփռել է նա վարսքը բնքուշ,  
Ընծիւղները իր հեզիկ,  
Իսկ իր կողքին՝ ակը հոսուն  
Շշնջում է, համոզո՛ւմ  
«Մի՞թէ անկիւնն այս տեսնելով՝  
Այլ ճանապարհ դուք կընտրէք »

12

Դու, սիրելի ծիծեռնակ,  
Ամէն տարի աստ գալով՝  
Հիսում ես քո բոյնն ամռան,



Իսկ ձմռանը հեռանում  
 Դեպ Նեղոսը, դեպ Մեմֆիս. .  
 Մինչդեռ էրոսն իմ սրտում  
 Տիտում է բռնն իր յաւէ՛րժ  
 Սերերն են անդ թեւատրում,  
 Ոմանք՝ իսկոյն ելնում ձուից,  
 Ոմանք՝ զարկում դեռ կեղեիկն:  
 Ճաերն այդ, բաց կտուցներով,  
 Ծղրաո՛ւմ են յախտեան:  
 Սնուցում են մեծերն անդուլ  
 էրոսներին այդ փոքրիկ,  
 Իսկ սրանք էլ, մեծանալով,  
 Իսկոյն ծնում են այլոց  
 Այլ ինչ միջոց պիտի գտնեն  
 Անզո՛ր են ես այդպիսի  
 էրոսներից պաշտպանուել

(Տի՛ն յուն թարգմ Արամ Թոփ՛եանը)

## ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

(1485–1544)

Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսէ աւագեալ  
(հատուած)

Ահա այգիք մեր ծաղկեցան,  
 Բուրեն ըզհոան անմահութեան,  
 Եկ, ցանկալի իմ իւննըման,  
 Եւ զուարճացուք ի բուրասաան:  
 Բըխեն ըսաինքդ կաթն եւ գինի,  
 Մեղր ի շըրթանցըդ քո կաթի,  
 Որով հոգիս իմ փափագի  
 Եւ նըւաղեալ յոյժ տոչոթի  
 Գեղեցկագեղ, քաղցրաբարբառ,  
 Սէր քո ունի խորհուրդ անճառ,  
 Իմանալի արեւ պայծառ,  
 Լուսատրեա՛ զմիաըս խաւար:  
 Դրախա վայելուչ, ծառ պըւտղատր,  
 Քաղցրաճաշակ գինի եւ նոր,  
 Սիրով արբեալ քո ահատր  
 Ի սենեկին խորհրդատր:  
 Երեւեցան ծաղկունքն յերկրի,  
 Նըւառցուք ընդ թեզ ի պարաիզի,

Երգեցից սէր քեզ սիրելի,  
Սիրտ իմ սիրով քո ոչ յագի:  
Ձօր հանապազ ընդ քեզ կալով,  
Ըզգեղ դիմաց քո դիտելով  
Եւ խօսակից քեզ լինելով,  
Ըստեպ-ըստեպ համբոյր տալով  
Եթէ յաչաց մարմնոյս ծածկիս,  
Մըտաց աչօք ինձ երեւիս.  
Բնակեալ ես դու յիմում սըրտիս,  
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս:  
Ընտրեալ սակի սոփերական,  
Ակ լուսատու եւ կարկէհան,  
Տըպազ եւ կայծ յոյժ պատուական,  
Ելեալ խընդրեմ զքեզ անխափան  
Թէ տեսանեմ ըզքեզ կըրկին,  
Լուսատրի միտքս իմ մըթին,  
Եւ տամ համբոյր շըիթանց քոյին,  
Նա վերանամ ես ի յԱդին  
Ժուժկալութիւն չունիմ անկան,  
Ձտի ու գիշեր նըստեալ ողբամ,  
Վառեալ սիրով քո տապանամ,  
Ձաչս ի յանհասըղ համբառնամ  
Ի անսլենէ քո արբեցայ,  
Ահեղակերպ լուսոյ արքայ

Հոգիս բերկրեալ ընդ բեզ ցընծայ,  
 Սիրով ի սէրըդ կապեցայ  
 Լուսապայծառ երեւի նա,  
 Որթուց եղանց նըման խայտայ,  
 Ահա եկեալ ի Թեմանայ,  
 Զգեստաւորեալ ի բոսորայ՝  
 Խունկ եւ հալուէ, ծաղիկ դաշաաց,  
 Անճառելի հոտ քո բուրեաց,  
 Ելից զաշխարհս համատարած,  
 Յորձ մարդիկ եղեն հարբած

## ՎԱՀԱՆ ԹԵՔԷՅԵԱՆ

(1878—1945)

### Կը սիրէի

Կը սիրէի Վաղանցուկ խոովքները մարմնական,  
 աններելի խոովքներն, որոնց սակայն հեշտանքով  
 Կը դիմէի աղբիւրին, ինչպէս իօտերը կուգան  
 Կիճովնալով, համրաբար, օշինդրի բարկ թուփին քով  
 Կը սիրէի ձեւերուդ ընտանութիւնը աղուոր,  
 Ստուերին մէջ դիմացես հնչող տաք ձայնդ տրամած,  
 Եւ նուրբ հասակդ ճկուն եւ աչքերդ լուսաւոր,

Որ վառելով կիջնէին հոգիս մէջ մթամած  
 Ու կիյնար մութը, ինչպէս օրհնութիւն մը մեր գլխուն,  
 Կուգար քանդել մեր մէջտեղ թումբը լոյսին, քար առ քար,  
 Մինչ մազերուդ բերնիս տակ զգլխիչ բոյրը անհուն  
 Խունկէ հոգիդ էր կարծես, որ դէպի ինձ կամբառնար..  
 Ո՛վ սիրական, երբեմնի խռովքներէն վաղանցուկ  
 Չմնաց բան մը հիմա, ո՛չ ցաւ, ո՛չ խիւղ, ո՛չ նախանձ,  
 Մինչդեռ հոգիդ, որ ճանչցա, կը բնակի յիս ծածուկ,  
 Ան իմ սուրբս է, էս անոր խորհերըս տօնն են անանց

## ՋՈՆ ԴՐԱՅԴԸՆ

(1631–1700)

### Երգ

Երբ անցնում են սիրոյ ցաւերը խորին,  
 Երբ մարում են ամէն տրտունջ ու հառաչ,  
 Ախ ինչ լաւ է նայել նրա աչքերին,  
 Աչքեր, որոնք տանջում էին քիչ առաջ  
 Երբ կորչում են կասկածները մեր դէմքին,  
 Երբ ցաւերը նուազել են ու մեղմել,  
 Ախ ինչ լաւ է նրա հայումն իմ ձեռքին,  
 Ախ ինչ լաւ է նրա ձեռքը պինդ սեղմել

Երբ սիրելիս ինձ այլեւս չի մերժում  
 Եւ աչքերով թնքուշ սէր է ապիս ինձ,  
 Ինչե՛ր ասես չեն կաաարում իմ ներսում,  
 Եւ ինչպէ՛ս է սիրաս դողում հաճոյքից՝  
 Երբ աչքերը սիրոյ վայելքն է գերել՝  
 Հաճոյքի ու ցափ միջեւ անընդմէջ,  
 Անհնա՛ր է այդ բերկրանքը պաակերել՝  
 Գիտենալով, որ մեր սէրը չունի վերջ՝

*(Անգլ թարգմ Մամուկ Մկրտչեանը)*

## ԺԱԿ ՊՐԵՒԵՐ

### Այդ սէրը

Այդ սէրն  
 այնքան բուռն,  
 այնքան դիրաբեկ,  
 այնքան նուրբ,  
 այնքան յուսահաա  
 այդ սէրն  
 օրուայ պէս սիրուն  
 եւ եղանակի պէս վաա,  
 երբ եղանակն է վաա,  
 այդ սէրն այնքան գեղեցիկ,

այնքան երջանիկ  
եւ այնքան զուարթ  
եւ ծիծաղելի  
ինչպէս խաւարում վախից ղողացող փոքրիկ երեխայ  
եւ այնքան վստահ,  
ինչպէս գիշերում մարդը համարձակ  
Սէրն այդ, որ ահ էր ներշնչում մարդկանց,  
ստիպում խօսել,  
ստիպում գունատուել,  
սէրն այդ լրտեսուած,  
քանի որ մենք ենք լրտեսել մարդկանց,  
հալածուած, խոցուած, կործանուած, ժխտուած ու  
նոտահարուած,  
քանի որ մենք ենք սէրը հալածել, կործանել, ժխտել,  
խոցել, մոռացել ու ոտնահարել  
Այդ սէրը համակ,  
դեռ շատ կենսունակ  
եւ արեւափառ,  
այն քոնն է,  
իմն է  
Սէրն այդ, որ եղաւ  
մշտապէս նոր բան  
եւ սակայն երբէք, երբէք չփոխուեց

Եւ տունկի նման ճշմարիտ մնաց, մնաց դողահար՝ թռչունի  
 նման,

ամառուայ նման՝ կենսատու եւ ջերմ:

Մենք կարող ենք հիմա  
 հեռանալ ու վերադառնալ,  
 մոռանալ

Եւ յետոյ քնել,  
 արթնանալ, տառապել, ծերանալ  
 ու դարձեալ քնել,

մահը երազել,  
 արթնանալ, ժպտալ, ծիծաղել  
 ու ջահելանալ՝

Մեր սէրն այստեղ է՝  
 էշի պէս համառ,  
 տենչի պէս անսպառ,  
 յիշողութեան պէս բիրտ,  
 զոջումի պէս անմիտ,  
 յուշի պէս քաղցր,  
 մարմարի պէս պաղ,  
 օրուայ պէս պայծառ,  
 մանկան պէս վտիտ,

Եւ նայում է նա մեզ միշտ ժպտալով  
 եւ խօսում մեզ հետ՝ ոչինչ չասելով.  
 Իսկ ես լսում եմ նրան դողահար